ՈՒՐՖԱՅԻ 1915 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ռ. Օ. ՍԱՀԱԿՅԱՆ

1915 թ. գարունը ճակատագրական դարձավ հայ ժողովրդի համար։ Երիտթուրքերը սկսեցին ոչնչացնել Թուրքիայի տարածքում բնակվող հայերին։ Մինչ այդ բանակ զորակոչեցին հայ երիտասարդ ու միջին տարիքի տղամարդկանց, ապա, առանձին խմբերով հեռացնելով, անխնա կոտորեցին։ Երիտթուրքերը կամ «քաղցած գայլերը»; ինչպես նրանց որակել էր Կ. Պոլսի գերմանական դեսպան կոմս Վոլֆ Մետերնիխը[1], *դաժան հաշվեհարդար տեսան նաև հայ մտավորականության հետ։ Այնուհետև սրի քաշեցին խաղաղ բնակիչներին՝ կանանց, երեխաներին և ծերերին։ Համընդհանուր այս կոտորածի ժամանակ, այնտեղ, որտեղ քիչ թե շատ հնարավոր էր, հայերը դիմեցին ինքնապաշտպանության, փրկելու իրենց կյանքն ու պատիվը։ Անձնուրացորեն և քաջաբար պաշտպանվեցին Վանի, Շապին Կարահիսարի, Սասունի և մի շարք այլ վայրերի բնակիչները։*

Թուրք չարդարարների դեմ հերոսական ինքնապաշտպանության դիմեցին Ուրֆա քաղաքի հայերը, որտեղ 100000 բնակչությունից 35000-ը հայեր էին[2]։

Քաղաքը 1915 թ. գարնանից վերածվել էր համակենտրոնացման ճամբարի և աքսորավայրի[3]։ *Ամեն օր, առանց դադարի Արևմտյան Հայաստանի տարբեր քաղաքներից տարագիրների քարավանները անցնում էին Ուրֆայով*[4]։ *Այս ամենը, ինչպես գրում էր Ուրֆայի գերմանական միսիայի աշխատակից Բրունո Էքարտը, նպատակ ուներ հայերին տանջալից սովամահության դատապարտել Միջագետքի անապատներում*[5]։ *Հայերի նկատմամբ գործադրված բռնությունների մասին է վկայում նաև ամերիկյան միսիայի տնօրեն Լեսլին Հալլեպի ամերիկյան հյուպատոս Ջակսոնին ուղղված նամակում*[6]։

1 «Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 3, էջ 72։

2 Հայ ժողովրդի պատմություն. հ. 6, Երևան, 1981, էջ 572։ Տե՛ս նաև ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 314, ց. 8, գ. 4, թ. 4։ Ըստ Յոհ. Լեփսիուսի՝ քաղաքի հայերի թիվը կազմել է 25900 (տե՛ս Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei. 1916, S. 298. Նույնի՝ Der Todesgang des Armenischen Volkes in der Turkei während des Weltkrieges. Potsdam, 1919, S. 305. *Ըստ մեկ այլ աղբյուրի, Ուրֆայի բնակչությունը կազմել է 50000, իսկ հայերը՝ 20000 (Տե՛ս* Maria Sick Ingeborg. Karren Jeppe. Im Kampf um Volk in Not. Stuttgart, 1929, S. 77). *Ըստ Թուրքականի՝ հայերի թիվը եղել է 18700 (Տե՛ս* Kamuran Gürün. The Armenian File. The Myth of Innocense Exposed. London, 1985, p. 96).

3 H. W. Glockler. Interned in Turkey (1914—1918). Lebanon, Sevan Press, 1969, p. 25. *Տե՛ս նաև* ՀՍՍՀ ՊԿՊԱ, *ֆ. 227, ց. 1, գ. 478, թ. 13, ֆ. 57, ց. 5, գ. 106, թ. 7.*

4 *Զվիցերացի հայասեր Յոզուպ Քյունցլեր իր հայանպաստ գործունեության 40-ամյակի առթիվ. Գեյրութ—Հալեպ, 1946, էջ 71.* Jakob Künzler. Dreißig Jahre Dienst am Orient. Basel, 1933, S. 53. *Տե՛ս նաև* Ida Alamuddin. Papa Kuenzler and the Armenians. London, 1970, p. 64.

5 Bruno Eckart. Meine Erlebnisse in Uria. Potsdam, 1922, S. 7.

6 Armenian Review. Spring 1984, vol. 37, № 1, Boston, p. 112. *Տե՛ս նաև* Deutschland und Armenien 1914—1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius. Potsdam, 1919, S. 225. Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов, под редакцией М. Г. Нерсисяна, Еревана, 1983, с. 381.

Տարագիրներին ուղեկցող ժանդարմները անմիջական մասնակցություն էին ունենում հայերի թալանին և կողոպուտին։

Աքսորված հայերի թալանը և կողոպուտը շարունակվում էր նաև Ուրֆայում[7]։ «Ուրֆայի մեջ աքսորականները ամեն տեսակ վայրագությանց կ'ենթարկվին... կիներ, աղջիկներ վաճառել, երեխաներ փախցնելը սովորական կը դառնար»,— վկայում էր աքսորական հայուհիներից մեկը[8]։ Ամերիկյան միսիոներ Լեսլին վկայում էր, որ քաղաքի մահմեդականների տներում գտնվում էին 500-ից ավելի առևանգված հայ կանայք և աղջիկներ, որոնցից շատերին հետագայում դուրս էին շպրտում. բացի այդ, սովորական երևույթ էր դարձել այս աղջիկներին փողոցներում բացահայտ անարգելը[9]։

Գերմանացի ականատեսը վկայում էր, թե ինչպես թուրքերը Ուրֆայի մոտ գտնվող գյուղերից մեկի հայ կանանց հարկադրել էին մերկանալ և այդպես քայլել 40 աստիճանի հասնող կիզիչ արևի տակ[10]։

Քաղաքում հավաքված տարագիրները գտնվում էին ահավոր հակասանիտարական պայմաններում։ Այդ էր պատճառը, որ Ուրֆայում սաստկացող տարբեր վարակիչ հիվանդություններով տառապողների թիվը հասնում էր 60000-ի[11]։ Կաթողիկոս Գևորգ Ե-ին ուղղված նամակներից մեկում խնդրվում էր հնարավորին չափ արագ օգնություն ցույց տալ մի շարք վայրերի գաղթականներին, այդ թվում նաև Ուրֆայի, հակառակ դեպքում նրանց սովամահություն էր սպառնում[12]։

Ուրֆայում տարագիրներից կազմվում էին նոր քարավաններ, որից հետո նրանց քշում էին Միջագետքի անապատները։ Քաղաքից դուրս եկող ճանապարհին, այստեղ և այնտեղ թափված էին բազմաթիվ դիակներ[13]։

Չնայած ոստիկանական և զինվորական ուժեղ հսկողությանը, քաղաքի հայերը ձգտում էին ամեն կերպ թեթևացնել տարագիրների վիճակը՝ նրանց տալով հագուստ, ուտելիք և դեղորայք։ Հնարավորության դեպքում աշխատում էին թաքցնել նրանց իրենց տներում։

Տեսնելով թուրքական իշխանությունների դաժան և անողորմ վերաբերմունքը, Ուրֆայի հայ բնակչության ներկայացուցիչները ժողով գումարեցին, սպառնալից իրավիճակը քննարկելու համար։ Որոշվեց անմիջական գործողությունների չդիմել, իշխանություններին առիթ չտալու համար, այլ սպասել տեղահանման հրամանին։ Նրանց երկյուղը տեղին էր, որովհետև, ինչպես նշում էր Բ. Էքարտը, թուրքերը եռանդուն կերպով առիթ էին փնտրում Ուրֆայի հայերին նույնպես աքսորելու համար[14]։ Այդ պատճառով ուրֆացիները համբերատար տանում էին բոլոր անարգանքները և բռնությունները, որոնք կատարվում էին թուրքական իշխանությունների կողմից, վկայում էր օտարերկրացի ականատեսը։

Իշխանությունները հունիսի 25-ին երկու ժամվա ընթացքում ձերբակալեցին 100-ից ավելի նշանավոր հայերի, ինչպես նաև ժողովի մասնակիցներին[15]։ Ձերբակալությունից հաջողվեց խուսափել քչերին, այդ թվում նաև

7 Ն. Ջարենցի անվան գրականության և արվեստի թանգարան. Լևոն Մեսրոպի ֆոնդ, գ. 76, թ. 2։ Տե՛ս նաև ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 487, թ. 22։

8 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 487, թ. 13։

9 Armenian Review. Spring 1984, vol. 37, № 1, p. 115.

10 Germany, Turkey and Armenia. A selection of documentary evidence relating German and other sources. London. 1917, p. 102.

11 J. Künzler. Im Lande des Blutes und der Tränen. Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges. Potsdam, 1921. S. 17. Տե՛ս նաև ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 478, թ. 13։

12 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 31, թ. 49։

13 I. Alamuddin. Op. cit., p. 64; Deutschland und Armenien···, S. 131.

14 B. Eckart. Op. cit., S. 7.

15 H. W. Glockler. Op. cit., p. 25; Արամ Սահակյան. Դյուցազնական Ուրֆան և իր հայորդիները. Պեյրութ, 1955, էջ 764։ Տե՛ս նաև՝ H. W. Glockler. Op. cit., p. 27.

Մկրտիչ Յոթնեղբարյանին, որին հետագայում վիճակված էր գլխավորել Ուրֆայի հերոսական ինքնապաշտպանությունը։

Շուտով երիտթուրքական իշխանությունները 1500 ուրֆացի հայ երիտասարդների ուղարկեցին այսպես կոչված «թիկունքային աշխատանքների»[16]։ Միաժամանակ հայերից պահանջվեց հանձնել իրենց մոտ եղած զենքը։ Շնորհիվ Մ. Յոթնեղբարյանի եռանդուն գործունեության, նրանք հանձնեցին միայն հին զենքը և որսորդական հրացանները։

Օգոստոսի սկզբներին Ուրֆա ժամանեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցության ներկայացուցիչներ Ահմեդ և Խալիլ բեյերը, «երկու սարսափելի հյուրեր», ինչպես նրանց որակել էր գերմանական միսիայի աշխատակիցներից մեկը[17]։ Նրանք ունեին Կ. Պոլսից ստացված հատուկ հրահանգներ, որոնց էությունը շուտով պարզ դարձավ։ Ահմեդ բեյը աչքի էր ընկել Վանի կոտորածների ժամանակ և հայտնի էր «Չերքեզ Ահմեդ» անունով[18]։ Այս երկուսը իրենց ձեռքում կենտրոնացրեցին քաղաքի ողջ իշխանությունը, որը է՛լ ավելի սրեց իրադրությունը[19]։ Նրանք էին, որ կազմակերպեցին և անմիջական մասնակցություն ունեցան Գրիգոր Զոհրապի և Վարդգեսի սպանությանը։ Նրանց հրամանով և մասնակցությամբ, Ուրֆայից ոչ հեռու, անգթաբար կոտորվեցին բանակ զորակոչված 1500 ուրֆացի երիտասարդներ[20]։ Այդ դժոխքից հաջողվեց փրկվել միայն երկու հոգու, որոնք այդ աղետաբեր լուրը բերեցին Ուրֆա։ Գերմանացի ականատեսը վկայում էր. «Հայկական թաղամասում տնից տուն մի սարսափելի լուր անցավ... Քաղաքից դուրս ոստիկանները կոտորել էին բոլոր հայ բանվորներին»[21]։

Դրանից հետո իշխանությունները ավելի խստացրին հայկական թաղամասի հսկողությունը։ Տների խուզարկությունները տեղի էին ունենում ամեն օր՝ ուղեկցվելով ոստիկանական կամայականություններով[22]։ Օգոստոսի 19-ին, խուզարկություններից մեկի ժամանակ, չհանդուրժելով ոստիկանական բռնությունը, հայերը զենքի դիմեցին, ինչը և ագդանշան հանդիսացավ, որպեսզի երիտթուրքական իշխանությունները սկսեն հայերի կոտորածը։

Գերմանական միսիայի աշխատակից Յակոբ Կյունցլերը վկայում էր, որ Ահմեդ և Խալիլ բեյերը հրահրեցին խաժամուժին սկսելու կոտորածը՝ գոչելով. «Կորչեն գյավուրները (անհավատները), ինչո՞ւ եք դանդաղում»[23]։ Մահմեդական ամբոխը, զինված մահակներով, դաշույններով և այլ զենքով, հանկարծակի հարձակվեց ոչինչ չկասկածող անմեղ ու անպաշտպան, իրենց առօրյա գործերով զբաղված հայերի վրա։ Սկսվեց կոտորածը։ Անգլիացի ականատեսը գրում էր. «Ֆանատիզմով ցնորված խաժամուժը արյուն էր տենչում»[24]։ Երբ հայերից մեկը «գնություն խնդրեց Չերքեզ Ահմեդից, վերջինս դուրս քաշեց ատրճանակը, կրակելով նրա վրա, ասաց, «Կարեկցելով քեզ, հայ շուն»[25]։ Այդ

---

16 Արամ Սահակյան. նշվ. աշխ., էջ 783։

17 B. Eckart. Op. cit., S. 10.

18 Rafael de Nogales. Four Years Beneath the Crescent. New York—London, 1926, p. 74.

19 Armenian Review. Spring 1984, vol. 37, № 1, p. 111.

20 J. Künzler. Op. cit., S. 17. Տե՛ս նաև՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 314, ց. 8, գ. 7, թ. 7։

21 B. Eckart. Op. cit., S. 15. Տե՛ս նաև M. S. Ingeborg. Op. cit., S. 133.

22 The Treatment of Armenians in Ottoman Empire, 1915—16. Documents presented to Grey of Fallodon by Viscount Bryce; with a pref. Viscount Bryce. 1916, p. 528. Armenian Review. Spring 1984, vol. 37, № 1, p. 88. Տե՛ս նաև B. Eckart. Op. cit., S. 8.

23 J. Kunzler. Im Lande des Blutes, S. 22—23. Տե՛ս նաև Յ. Eckart. Op. cit., S. 13. Deutschland und Armenien···, S. 225.

24 H. W. Glockler. Op. cit., p. 29

25 J. Künzler. Im Lande des Blutes. S. 26.

օրը զոհվեցին 200-ից ավելի հայեր[26]։ Անգլիական «Թայմսը» իր հոդվածներից մեկում անդրադառնալով Ուրֆայում ստեղծված իրադրությանը, գրում էր. «Ուրֆայի փողոցները տառացիորեն ողողված էին արյունով»[27]։ Ֆրանսիացի ականատեսը. նշում էր, որ մի գերմանացի, կոտորածից հետո, լուսանկարում էր հայերից «խլված» հրացանները և որոշ ժամանակ անց թուրքական մամուլում հայտնվեց մի լուսանկար, հետևյալ մակագրությամբ. «Հրացաններ, որ հայերը գործածեր են թուրքերու դեմ»[28]։

Ուրֆացիները վճռեցին դիմել ինքնապաշտպանության։ Թաքստոցներից դուրս բերվեցին պահված դենքն ու զինամթերքները։ Ինքնապաշտպանությունը ղեկավարելու համար ստեղծվեց Զինվորական խորհուրդ, որի մեջ մտան Մկրտիչ Յոթնեղբարյանը, Հարություն Իմիրզյանը, Լևոն Էղբերլերյանը, Հարություն Ռաստկելենյանը, Արմենակ Աթթարյանը և Խորեն Գյուփելյանը։ Խորհրդի ղեկավար ընտրվեց Մ. Յոթնեղբարյանը, Ուրֆայի ինքնապաշտպանության ոգին[29]։ Կազմակերպվեցին նաև պարենամթերքի հայթայթման ծառայություն, զենքի և զինամթերքի պատրաստման և վերանորոգման արհեստանոց, ինչպես նաև բուժօգնություն։ Տարիքավորներին հանձնարարվեց հետևել թաղամասի ներքին կարգ ու կանոնին։ Հայ ինքնապաշտպանների թիվը, ըստ գերմանական հյուպատոսական աղբյուրների, կազմել էր 2000 մարդ[30], ըստ մեկ այլ աղբյուրի՝ 800 մարդ[31]։ Նրանց հիմնական մասը կազմում էին պատանիներ և աղջիկներ[32]։

Շնորհիվ Մ. Յոթնեղբարյանի եռանդուն գործունեության, ուրֆացիները ապահովված էին բավարար քանակությամբ զենքով։ Միայն Հալեպի զորանոցից նրան, իր ընկերների հետ միասին, հաջողվել էր դուրս բերել 103 հրացան[33]։

Սեպտեմբերի 29-ին ոստիկանությունը շրջապատեց բանվորական գումարտակի կոտորածից փրկված երկու հայ երիտասարդների տունը, նրանց իբրև դասալիքների ձերբակալելու համար։ Վերջիններս կռվի մեջ մտան, մի քանի ոստիկան սպանվեց։

Այս ընդհարումն առիթ հանդիսացավ սկսելու Ուրֆայի հերոսական ինքնապաշտպանությունը։ Սկսեցին զողանջել քաղաքի հայկական եկեղեցու զանգերը՝ ի դեն կոչելով Ուրֆայի հայերին։ Անգլիացի ականատեսը գրում էր. «...Հայկական մեծ եկեղեցու զանգը սկսեց հնչել։ Երբեք չեմ մոռանա այս հնչյունի ներգործությունը մեզ վրա։ Այն իսկական տագնապաղանգ էր»։ Նա միաժամանակ նշում էր, որ հնչող զանգը «...պարզորեն ասում էր, որ հայերը գիտակցում են, որ կռվելու են մինչև վերջ...»[34]։

Հայկական թաղամասն արագորեն ծածկվեց բարիկադներով և ամրություններով։ Այն բաժանվեց 6 պաշտպանական շրջանների 32 դիրքերով[35], փակվեցին դեպի հայկական թաղամասը տանող 12 փողոցների մուտքերը[36]։

---

26 Deutschland und Armenien···, S. 143, 225; J. Künzler. Im Lande des Blutes, S. 23; B. Eckart. Op. cit., S. 13; J. Lepsius. Der Todesgang, S. 299; H. W. Glockler. Op. cit., p. 30.

27 Deutschland und Armenien···. S. 171. Геноцид···, с. 364.

28 «Հայրենիք», Բոստոն, սեպտեմբեր, 1937, № 11, էջ 66։

29 J. Künzler. Im Lande des Blutes, S. 46.

30 Deutschland und Armenien···. S 177; С. Степанян. Армения в политике империалистической Германии (конец XIX—начало XX века). Ереван, 1975, с. 131.

31 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 314, ց. 8, գ. 4, թ. 3 (հտ.)։

32 «Երիտասարդ Հայաստան», Զիկագո, 23 հոկտեմբերի 1918, № 50։

33 Հակոբ Հիսայան. Դյուցազնական հայորդին. Մկրտիչ Յոթնեղբարյան. Աթենք, 1937, էջ 79, Տե՛ս նաև I. Alamuddin. Op. cit., p. 66.

34 H. W. Glockler. Op. cit., p. 39.

35 Արամ Սահակյան. Նշվ. աշխ., էջ 917։

36 M. S. Ingeborg. Op. cit., S. 134.

Դիրքերը մեկը մյուսի հետ կապվեցին ստորգետնյա անցուղիներով։ Ինքնապաշտպանության համար մեծ նշանակություն ունեցան հայկական թաղամասի նեղ փողոցները, ամուր քարաշեն տները և այն հանգամանքը, որ հայկական թաղամասը ավելի բարձր էր գտնվում թուրքականից։

Ինքնապաշտպաններից մեկը դիմելով թուրքերին, գոչեց. «Մահմեդականներ, դուք մեզ հուսահատության հասցրեցիք, կառավարությունը մեզ լավագույն օրեր էր խոստացել։ Դրանք բոլորը խաբեություն է և սուտ։ Մեր զինվորները անարգվել են, նրանց եղբայրները և հայրերը սպանվել են, կանայք և երեխաները խայտառակվել...։ Մենք լսել ենք մեր մարդկանց նենգավարդասպանության մասին։ Սակայն մենք թույլ չենք տա մեզ ոչխարի նման մորթել։ Զենքը ձեռքներիս, մեր կյանքը թանկ կվաճառենք»[37]։

Մինչև կանոնավոր զորքի ժամանումը երիտթուրքական իշխանությունները ետքի հանեցին շրջակայքի մահմեդական բնակչությանը։ Ականատեսը գրում էր. «Երկրորդ օրը (սեպտեմբերի 30-ին—Ռ. Ս.) առավոտյան, մենք տեսանք դինված մարդկանց խմբեր. ոմանք ձի հեծած, բոլոր ուղղություններից գալիս էին դեպի քաղաք... Նրանց նպատակը կողոպուտն ու թալանն էր»[38]։ Միայն առաջին օրերին, այս խաժամուժին տրվեց 500 հրացան և 60000 փամփուշտ[39]։ Ստանալով համալրում, հոկտեմբերի 1-ին հակառակորդն անցավ հարձակման և գրավեց հայ կաթոլիկների ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող եկեղեցին։ Մ. Յոթնեղբարյանը, իր ջոկատի գլուխն անցած, ինքնաշեն նռնակներով, անակնկալ գրոհեց թշնամու վրա։ Հակառակորդը փախուստի դիմեց՝ կորցնելով 800 մարդ[40]։

Առաջին հաղթանակը մեծ ոգևորությամբ ընդունվեց հայերի կողմից։ «Կեցցեներն ու երգերը կթնդային ամեն կողմից»,— վերհիշում էր ականատեսներից մեկը[41]։

Հոկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը թշնամին անցավ հարձակման Հայր Աբրահամ կոչված թաղամասի վրա, որի պաշտպանությունը գլխավորում էր Հարություն Ռաստկելենյանը։ Ճգտագործելով ուժերի գերազանցությունը, հակառակորդը, հաշվի չառնելով սեփական կորուստները, համառորեն մոտենում էր հայկական դիրքերին։ Մ. Յոթնեղբարյանը և Հ. Ռաստկելենյանը որոշում են կեղծ նահանջ կատարել, թույլ տալով նրանց մտնել հայկական թաղամաս, ապա հարձակվել թիկունքից և ջախջախել։ Մահմեդական խաժամուժը տեսնելով, որ հայերը լքել են դիրքերը, ներխուժեցին թաղամաս և սկսեցին թալանել շրջակա տները։ Օգտվելով կողոպուտով զբաղված թշնամու անհոգությունից, հայ մարտիկները հարձակման անցան, ոչնչացնելով մոտ 1200 մարդ[42]։ Այս մարտում աչքի ընկած խանում Քեթենճյանը և Մարիամ Զիլինկիրյանը պարգևատրվեցին զենքով։ Հետագայում կանանցից և աղջիկներից կազմվեցին երեք մարտական ջոկատներ, թվով 200 հոգի[43]։

Թշնամու կորուստները այնքան մեծ էին, որ նա երկու օր շարունակ ոչ մի ակտիվ գործողության չդիմեց, այլ բավարարվեց քաղաքի բերդից հայկական թաղամասի ռմբակոծմամբ, որը մեծ վնաս չպատճառելով, միայն որոշ խուճապ առաջացրեց բնակչության մեջ։ Զինվորական խորհրդի կողմից ձեռնարկված միջոցառումները հանգստացրին ժողովրդին։ Թշնամու թնդանոթները հին տեսակի էին և այդ պատճառով նրանց արկերի վնասը այնքան էլ մեծ չէր։ Բացի այդ, հայերին հաջողվում էր ոչնչացնել թուրք հրետանավորներին։ Հատկապես աչքի ընկավ Մ. Յոթնեղբարյանի եղբայրը՝ Սարգիսը, որը իր դիպուկ

---

37 B. Eckart. Op. cit., S. 20; M. S. Ingeborg. Op. cit., S. 133; Արամ Սահակյան. Նշվ. աշխ., էջ 818։

38 H. W. Glockler. Op. cit., p. 40.

39 «Հայրենիք». Նոյեմբեր, 1926, № 1, էջ 110։

40 Armenian Review. Spring 1984, vol. 37, № 1, p. 134.

41 Արամ Սահակյան. Նշվ. աշխ., էջ 826։

42 Armenian Review. Spring 1984, vol. 37, № 1, p. 134.

43 ՀՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 314, ց. 8, գ. 4, թ. 5 (հտ)։

նշանառության համար ստացել էր «Լաստու բիր» մականունը։ Հայերի անվրեպ նշանառության մասին վկայում էր Յ. Կյունցլերը. «Յուրաքանչյուրը, ով... դուրս էր նայում (դիրքերից—Ռ. Ս.) զոհ էր դառնում հայերի դիպուկ կրակոցներին»[44]։

Հոկտեմբերի 6-ին, մի խումբ հայեր, Մ. Յոթնեղբարյանի գլխավորությամբ փորձեցին ոչնչացնել Հալեպից Ուրֆա բերվող հրետանին, սակայն այդ չհաջողվեց իրականացնել։ Նրանց այդ հանդուգն հարձակումը մեծ իրարանցում առաջացրեց հակառակորդի մեջ և միայն մութն ընկնելուց հետո, երբ ժամանեց Հալեպի ռազմական պարետը՝ Ֆահրի փաշան, մի քանի հարյուր դինվորներով, թուրքերը համարձակվեցին հրետանին կամ «մարդասպանության գործիքը», ինչպես որակել էր Յ. Կյունցլերը, բերել քաղաք[45]։ Մինչև հոկտեմբերի 12-ը Ուրֆա բերվեցին 3 գումարտակ, երկու 120 մմ տրամաչափի հաուբից և երկու դաշտային թնդանոթ[46]։

Թուրքերը հայերի դեմ կենտրոնացրեցին մոտ 11000 զինվոր[47], որից 6000-ը՝ կանոնավոր զորք[48], 600-ը Սրուճի Սուլեյման բեկի մարդիկ[49] և մընացածը՝ շրջակա մահմեդական բնակչության թվից։ Թուրքական շտաբի պետն էր գերմանացի սպա Վոլֆգանգ ֆոն Ռայխենբերգը, որը մասնակցել էր Մարաշի և Զեյթունի խաղաղ բնակչության ոչնչացմանը[50]։ Թուրքերին օգնում էր ազգությամբ վենեսուելացի, գերմանական բանակի սպա Ռաֆայել դե Նոգալեսը, որը ես այդպիսի գործում հարուստ «փորձ» ուներ։ Այդ արկածախնդիր անձնավորությունը մասնակցել էր Վանի մարտերին՝ ղեկավարելով թուրքական հրետանին[51]։

Չնայած թշնամու քանակական գերազանցությանը, սկզբնական շրջանում հայերին հաջողվում էր հետ մղել նրա բոլոր գրոհները[52]։

Թշնամու մեծ կորուստների մասին է վկայում Յ. Կյունցլերը, որը նշում էր, որ Ուրֆայի գերմանական հիվանդանոցը լեփ լեցուն էր թուրք վիրավորներով, որոնցից մեկը պատմել է նրան, թե ինչպես 23 զինվորներով հարձակվել էին հայկական դիրքերից մեկի վրա, որից հետո կենդանի էին մնացել միայն 5 զինվոր, բոլորն էլ վիրավոր[53]։

Հայերն անձնազոհաբար մարտնչում էին թշնամու դեմ, գիտակցելով, որ միայն այդ կերպ կարող են արժանի հակահարված տալ արյունարբու ոսոխին։ «Դեռատի աղջիկները, մահվան վրա խնդալով, զինվորներուն (թուրք—Ռ. Ս.) լպոռային... Տեսեք, մենք կ'երգենք, տեսեք, մենք կը զվարճանանք»[54]։ Հայերի անզիջում և համառ դիմադրության մասին է վկայում գերմանական հյուպատոսներից մեկի հոկտեմբերի 9-ի զեկույցը. «Թուրքական զորքերի առաջխաղացումը չնչին է»[55]։

Ինքնապաշտպանական մարտերում աչքի ընկան նաև առանձին անհատներ, որոնց մասին մեզ տեղեկություններ են թողել տարբեր օտարերկրացիներ։

---

44 J. Künzler. Im Lande des Blutes, S. 41; I. Alamuddin. Op. cit., p. 66.

45 Նույն տեղում, էջ 44։

46 Deutschland und Armenien···, S. 177—178.

47 «Հայրենիք», նոյեմբեր, 1926, № 1, էջ 110։

48 Լ ու թ ե ր. Ուրֆայի հերոսամարտը. Բեյրութ, 1933, էջ 87։ Տե՛ս նաև՝ Yves Ternon. The Armenians. History of a Genocide. N. Y., 1981, p. 246; M. S. Ingeborg. Op. cit., p. 135.

49 «Հայրենիք», նոյեմբեր, 1926, № 1, էջ 110։

50 R. de. Nogales· Op. cit., p. 153.

51 Նույն տեղում, Ն ո ւ յ ն ի՝ Memoirs of Soldiers of Fortune. N. Y., 1932.

52 J. Künzler. Im Lande des Blutes, S. 41.

53 Նույն տեղում, էջ 45։

54 «Հայրենիք», սեպտեմբեր, 1937, № 11, էջ 67։

55 Deutschland und Armenien···, S 164. Տե՛ս նաև՝ J. Künzler. Im Lande des Blutes, S. 41.

Նրանցից մեկը՝ Հ. Գլոքլերը, նկարագրում էր, թե ինչպես մի հայ մարտիկ, կռվի մեջ մտնելով գերազանց թվով թշնամու հետ, մեծ կորուստներ էր պատճառում նրանց։ Թուրքերն ամեն գնով ձգտում էին ոչնչացնել այդ վտանգավոր դիրքը։ Եվ երբ հրետանին քաղաք բերվեց, թշնամին այն առաջին հերթին օգտագործեց այդ դիրքը ոչնչացնելու համար[56]։

Հայերի դիմադրությունից գազազած, թուրքական հրամանատարությունն անխնա ռմբակոծում էր հայկական թաղամասը[57]։ Միայն Մայր եկեղեցին ոչընչացնելու համար թշնամին արձակեց 500-ից ավելի արկ[58]։ Հերոսամարտի վերջում, հայկական թաղամասի 2300 տնից միայն 50-ն էին կանգուն մնացել[59]։ Ֆահրի փաշան մի քանի անգամ առաջարկեց հայերին հանձնվել, խոստանալով կյանքի և գույքի ապահովություն, սակայն հայերն ամեն անգամ մերժում էին՝ քաջ գիտենալով նման խոստումների իրական արժեքը։ Յ. Կյունցլերը, անդրադառնալով փաշայի այս առաջարկություններին՝ գրում էր, որ հայերը «չէին կարող հույս դնել թուրքական ներողամտության վրա»։ Նա նշում էր, որ հանձնվելու դեմ հատկապես հանդես էին գալիս հայ կանայք և աղջիկները, որոնք գերադասում էին «ավելի շուտ կռվելով զոհվել, քան կորցնել իրենց պատիվը և սովից մեռնել»[60]։ Այն բանից հետո, երբ թշնամին քարուքանդ արեց բոլոր փիրքերը, հայերն ամրացան ամերիկյան բարեգործական միսիայի շենքում և Մայր եկեղեցում։

Մինչ այդ փորձ արվեց ճեղքել հակառակորդի պաշարման օղակը, որը, սակայն, չհաջողվեց։ Ինքնապաշտպանների կորուստները բավականին մեծ էին. զոհվել էին ինքնապաշտպանության ղեկավարները, վիրավորված Մ. Յոթնեղբարյանը շարունակում էր ղեկավարել կռիվները՝ կոչ անելով իր մարտական ընկերներին տոկալ և դիմանալ[61]։

Չնայած հայերի անձնազոհ պայքարին, ինքնապաշտպանությունն աստիճանաբար մոտենում էր իր վախճանին։ Մարտերն, ըստ որոշ աղբյուրների, ավարտվել են հոկտեմբերի 15-ին կամ 16-ին, իսկ ըստ այլոց՝ 23-ին կամ 24-ին։ Ինքնապաշտպանները, թաքնվելով տների նկուղներում, փլատակներում և թաքստոցներում, դիմադրեցին մինչև նոյեմբերի կեսերը[62]։

Մ. Յոթնեղբարյանը թշնամու ձեռքը չընկնելու համար ինքնասպանություն գործեց։ Նրա օրինակին հետևեցին շատ ուրիշներ[63]։

Կենդանի մնացածներին թուրքերը և քրդերը կոտորեցին քաղաքում։ Մի մասին ոչնչացրին Ուրֆայից ոչ հեռու[64]։ 300-ից ավելի տղամարդկանց 600 ոտնաչափ բարձրություն ունեցող քարափից ցած գլորելին, իսկ մի մասին սպանեցին՝ գլուխները քարերով ջախջախելով[65]։ 42 հոգու (ըստ այլ տեղեկության՝ 120 հոգու—Ռ. Ս.)[66] քաղաքում կախաղան բարձրացրեցին, իսկ 140 հոգու ուղարկեցին Հալեպ «դատելու»[67]։

---

56 H. W. Glockler. Op. cit., p. 44—45.

57 B. Eckart. Op. cit., S. 26.

58 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 314, ց. 8, գ. 40, թ. 8։

59 J. Künzler. Im Lande des Blutes, S. 108.

60 J. Künzler. Dreißig Jahre Dienst, S. 67; նույնի՝ Im Lande des Blutes, S. 46.

61 M. S. Ingeborg. Op. cit., p. 135.

62 Deutschland und Armenien···, S. 178, 191; B. Eckart. Op. cit., S. 28; Ա. Մահակյան. Դյուցազնական Ուրֆան, էջ 837, ՀԺՊ, հ. 6, էջ 572։ Deutschland und Armenien···, S 226; J. Künzler. Dreißig Jahre, S. 66.

63 H. W. Glockler. Op. cit., p. 46.

64 B. Eckart. Op. cit., S. 28; H. W. Glockler. Op. cit., p. 47.

65 Armenian Review. Spring 1984, vol. 37, № 1, p. 134.

66 ՀԺՊ, հ. 6, էջ 572։

67 Լևոն Մեսրոպ. Աղետ և վերածնունդ. Փարիզ, 1952, էջ 127։

Հերոսամարտը արյան մեջ խեղդելուց հետո Ֆահրի փաշան, դիմելով զորքին, հայտարարեց. «...սա է դավաճանների և հեղափոխականների ճակատագիրը»[68]։

Ինքնապաշտպանությունից անմիջապես հետո թուրքական իշխանությունները ձեռնամուխ եղան Ուրֆայի մնացած բնակչության՝ կանանց և երեխաների աքսորմանը։ Դեպորտացիայի ենթարկվեցին 15000 մարդ[69] (ըստ Լեփսիուսի՝ մոտ 20000 մարդ—Ռ. Ս.)[70]։ Տարագրվածներին Ֆահրի փաշան արգելեց որևէ իր կամ կապոց վերցնել. չենթարկվողները գնդակահարվում էին[71]։ Տարագրման վայրը հասնելու համար աքսորվածները ոտքով պետք է անցնեին 100 մղոնից ավելի ճանապարհ[72]։ Հալեպի գերմանական հյուպատոս Ռոսլերը վկայում էր, որ այս աքսորվածներից միայն Հալեպում սովից և վարակիչ հիվանդություններից օրական մահանում էին 150—200 մարդ[73]։ Ականատես Ֆայեզ էլ Ղոսեյնը գրում էր. «Երբ որ մենք Ուրֆան ձգեցինք, ցնցոտիազգեստ կիներու խումբերու հանդիպեցանք, հոգնութենեն ուժասպառ, դիակներ կը ծածկեին ճամփուն երկու կողմերը»[74]։

Չնայած այդ ամենին, թաքնված հայերը շարունակում էին զգալի կորուստներ պատճառել թշնամուն։ Ականատես պարսիկ խուրշիդ խանի վկայությամբ միայն երեք գիշերվա ընթացքում թուրքերը կորցրեցին 4 սպա և 263 զինվոր[75]։ Ֆահրի փաշան, դուրս բերելով զորքերը հայկական թաղամասից, այն կրկին ռմբակոծության ենթարկեց։ Նա մեծ ճիգեր էր գործադրում, որպեսզի գերի վերջին մարտնչող հայերին[76]։ Սակայն թշնամուն հաջողվում էր ձեռք գցել միայն նրանց դիակները[77]։ Հերոսամարտից հետո հայկական թաղամասը հանձնվեց զինվորների և մահմեդական ամբոխի թալանին[78]։

Ինքնապաշտպանական մարտերի ընթացքում հայերը մեծ կորուստներ ունեցան։ Մեծ էին նաև հակառակորդի կորուստները։ Մեր տրամադրության տակ եղած տեղեկությունները հիշատակում են միայն զինվորական ուժի կորուստները, մարտերին մասնակցած մահմեդական ամբոխը հաշվի չի առնված։ Այսպես, գերմանական աղբյուրների համաձայն թուրքերի կորուստները կազմել են 50 սպանված և 120-ից 130 վիրավոր[79], ըստ Բրայսի՝ 7 սպա և 400 զինվոր սպանված[80]։ Անգլիական հրամանատարությանը ներկայացված տվյալներով թուրքերի կորուստները կազմել են 3000[81]։ Հերոսամարտի մասնակից Օվսաննա Թիթոյանի տվյալներով՝ 2000 սպանված[82]։ Հայերի կորուստների մասին որոշակի տվյալներ չկան։ Միայն հայտնի է, որ մարտերից հետո հայկական թաղամասից հավաքվել է 680 տարբեր տեսակի զենք[83]։ Ըստ

---

68 H. W. Glockler. Op. cit., p. 47.

69 Զուիցերացի հայասեր Յագուլ Քյունցլեր, էջ 80։ J. Künzler. Dreißig Jahre., S. 70; Նույնի՝ Im Lande des Blutes, S. 66.

70 J. Lepsius. Der Todesgang, S. 299.

71 J. Künzler. Im Lande des Blutes, S. 46—47.

72 Arthur Beylertan. Les Grandes Puissance L'Empire Ottoman et les Arméniéns dans les Archives Françaises (1914—1918). Paris, 1983, p. 208.

73 Deutschland und Armenien···. S. 178.

74 Ֆայեզ էլ Ղոսեյն. Հերոսական հայուհյան անցյալեն. Գահիրե, 1960, էջ 7—8։

75 «Հայրենիք», դեկտեմբեր, 1926, № 2, էջ 104։

76 B. Eckart. Op. cit., S. 29.

77 Herbert Adams Gibbons. Armenia in the World War. N. Y., 1926, p. 5.

78 B. Eckart. Op. cit., S. 43; H. W. Glockler. Op. cit., p. 49.

79 Deutschland und Armenien···. S. 178, 194; Նույնի՝ Der Todesgang, S. 299.

80 Լորտ Պրայս. Հայկական շարժերու փաստաթղթերը. Ա մաս. Կ. Պոլիս, 1920, էջ 101։ The Treatment of Armenians, p. 530; Y. Ternon. Op. cit., p. 246.

81 «Հայրենիք», դեկտեմբեր, 1926, № 2, էջ 110։

82 «Երիտասարդ Հայաստան», 26 փետրվարի 1918, № 51։

83 «Հայրենիք», դեկտեմբեր, 1926, № 2, էջ 110։

թուրքական տվյալների, սեփական կորուստները կազմել է 20 սպանված և 50 վիրավոր[84]։

Մարտերի ավարտից անմիջապես հետո երիտթուրքական իշխանությունները սկսեցին ամեն կերպ խեղաթյուրել Ուրֆայի ինքնապաշտպանական մարտերը։

1915 թ. հոկտեմբերի 28-ին, «Նորդ Դոյչե Ալգեմայնե Ցայտունգ» թերթում հանդես եկավ Գերմանիայում թուրքական դեսպանը, որը հայերին մեղադրեց նախօրոք ծրագրված և նախապատրաստված ապստամբության մեջ, որի հիմնական նպատակն էր որքան հնարավոր էր շատ թուրքական զորամասեր հետ քաշել ռազմաճակատից՝ նպաստելով ռուսական զորքերի առաջխաղացմանը։ Կառավարությունը շտապեց ի լուր ողջ աշխարհի հայտարարել. «Շնորհիվ արագ ու ազդու միջոցներու, որ զինվորական իշխանությունները գործադրեցին, այս հեղափոխական շարժումը խեղդվեցավ...»[85]։

Թալեաթ փաշան իր հուշերում մեղադրում էր Ուրֆայի հայերին՝ նախօրոք կազմակերպված ապստամբության մեջ, որին աջակցում էին օտարերկրյա պետությունները։ «Եթե Ուրֆայի ապստամբությունը լավ քննության ենթարկվի, կպարզվի, որ հայերի կողմից մասնավորապես նախընտրված էր այս քաղաքը որպես շատ կարևոր կենտրոն»[86]։ Նման տեսակետ էր արտահայտում երիտթուրքական մեկ այլ պարագլուխ՝ Ջեմալ փաշան, որը ուրֆացիների ինքնապաշտպանությունը դիտում էր որպես զինված ապստամբություն[87]։ Բացի այդ, իշխանությունները հայերին մեղադրեցին մահմեդական բնակչությանը և ներգաղթված օտարերկրացիներին կոտորելու մեջ[88]։ Ուրֆացիների աքսորը երիտթուրքերը բացատրում էին հետևյալ փաստարկով. «Հարկ եղավ, որ անոնք (հայերը—Ռ. Ս.) տեղափոխվեն ավելի ապահով վայրեր, ուր կարելի չըլլար արտաքին ազդեցություններու ենթարկվելու»[89]։

Հետևելով երիտթուրքական ոճրագործներին՝ ժամանակակից թուրք պատմաբանները շարունակում են կեղծել Ուրֆայի ինքնապաշտպանական մարտերը։ Նրանք մեղադրում են հայերին իշխանություններին չհնազանդվելու և նախահարձակ լինելու մեջ, որի հետևանքով թուրքական հրամանատարությունը ստիպված է եղել դիմել ուժի[90]։

Թուրք պատմաբան Զիյա Էնվեր Կարալը իր գրքույկում ներկայացնում է մի լուսանկար, ուր պատկերում էին Ուրֆայի մոտ, հայերի կողմից «սպանված մահմեդականներ»[91]։ Ֆայեզ էլ Ղոսեյնը ականատես է եղել, թե ինչպես թուրքական իշխանությունները, սպանված հայերին հագցնելով քրդական զգեստներ, լուսանկարում էին, որպեսզի հայերին մեղադրեն կոտորածներ կազմակերպելու մեջ[92]։ Թուրքական այս կեղծիքը մերկացրել է նաև Արամ Անտոնյանը[93]։

Թուրքական մեղադրանքների անհեթեթ և անհիմն լինելը երևում է գերմանական հյուպատոսների զեկուցագրերից։ Այսպես, Հալեպի հյուպատոս Ռոսլերի 1915 թ. նոյեմբերի 8-ի զեկուցագրում բերված տվյալները ամբող-

---

84 Deutschland und Armenien···, S. 192, 195. Տե՛ս նաև՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 405, թ. 40։

85 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 465, թ. 40։

86 Թալեաթ փաշայի հուշերը. Երևան, 1963, էջ 74 (ձեռագրի իրավունքով)։

87 Ջեմալ Փաշա. Հայկական հարց. Երևան, 1927, էջ 87։

88 Deutschland und Armenien···, S. 195.

89 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 465, թ. 42։

90 Documents on Ottoman Armenians, vol. 2, Ankara, 1983, p. 105.

91 Karal Ziya Enver. Question Armenian (1878—1923). Ankara. 1975, p. 26.

92 Ֆայեզ էլ Ղոսեյն. Հերոսական հայության անցյալն, էջ 39։

93 Արամ Անտոնյան. Մեծ ոճիրը. Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա. պաշտոնական հեռագրեր, լրագիրներու ստորագրությամբ և բազմաթիվ պատկերներով. Պոսթոն, 1921, էջ 221։

ջապես հերքում են Թալեաթ փաշայի այն կեղծ մեղադրանքները, թե հայերը «ժանդակություն են ստացել օտարերկրյա պետություններից»[94]։ Նա միաժամանակ նշում էր, որ հայերի մոտ չեն եղել ռուսական արտադրության զենք և զինամթերք, իսկ ինքնաշեն նռնակների համար օգտագործվող դինամիտը հայթայթվել է Բաղդադի երկաթուղու շինարարության ժամանակ։

Իսկ ինչ վերաբերում է հայերի մոտ գտնված զենքին, ապա Ռոսլերը այդ հետևյալ կերպ է բացատրում. երբ 1895 թ. թուրքերը հայկական եկեղեցում ոչնչացրին մոտ 1000 հայերի, այդ ժամանակից ի վեր հայերը «մշտական վախի մեջ... զենքով էին ապահովվում՝ անպաշտպան չլինելու համար»։ Նա գտնում էր, որ թուրքական իշխանությունների գործադրած միջոցները՝ աքսորը, կոտորածը, թալանը և այլն, առաջ բերեցին Ուրֆայի հայերի դիմադրությունը[95], որոնք վճռեցին «ավելի շուտ զենքը ձեռքին մեռնել և իրենց կյանքը որքան հնարավոր է թանկ վաճառել, քան թույլ տալ, որ իրենց ընտանիքները ոչնչացվեն կամ անարգվեն»[96]։ Ռոսլերը նշում էր, որ Ուրֆայի հայերի աքսորը մինչև այդ դեպքերը վճռված չէր, բայց միաժամանակ ավելացնում էր. «Սակայն ի՞նչ երաշխիք կարող էր գոյություն ունենալ, որ Ուրֆայի հերթը նույնպես չէր գալու»։

Հայերի դիմադրության նույն պատճառն էր նշում գերմանական մեկ այլ դիվանագետ՝ Հոֆմանը[97]։ Այդ են հաստատում բազմաթիվ օտարերկրացի ականատեսներ[98]։

Ինչ վերաբերում է քաղաքի մահմեդական բնակչության կոտորածին, դա ևս բացարձակ կեղծիք է։ Եթե հայերը իսկապես ցանկանային կոտորել նրանց, ապա դա մեծ դժվարություն չէր ներկայացնի նրանց համար։ Հայտնի է, որ մինչև ինքնապաշտպանության սկիզբը քաղաքում կար ընդամենը 60—80 ոստիկան[99]։

Թուրք պատմաբանների համար դժվար կլինի հերքել այն փաստը, որ Ուրֆայի գերմանական բարեգործական միսիայի աշխատակիցները խորհուրդ են տվել հայերին դիմադրել, չհավատալ թուրքերի խոստումներին. «...ոչ մի դեպքում անձնատուր չլինել, այլ մինչև վերջին մարդը կռվել...»[100]։ Եթե Ուրֆայի հայերը ծրագրել էին «ապստամբություն», ինչո՞ւ Թուրքիայի դաշնակից պետության քաղաքացիները նման խորհուրդ են տվել։ Այստեղից հետևում է, որ նրանք հայերի պայքարը արդարացի էին համարում։

Երիտթուրքական իշխանությունները չկատարեցին ոչ մի հետաքննություն պարզելու հայերի դիմադրության պատճառները։ Ճիշտ է, նրանք ձերբակալեցին երկու հոգու, սակայն, ինչպես վկայում է Յ. Կյունցլերը, «նրանք դիմադրությանը չեն մասնակցել»[101]։ Պարզապես երիտթուրքական իշխանությունները ձգտում էին ազատվել վերջին վկաներից։ Նույնիսկ չխնայեցին որբ կույրերի դպրոցի աշակերտուհիներին[102]։ Գերմանական դեսպանատունը, օգնելով թուրք ջարդարարներին քողարկել իրենց հանցագործությունների հետքերը, առաջարկեց Ուրֆայի գերմանական միսիայի ծառայություններից ազատել այն

---

[94] Deutschland und Armenien···, S. 178.

[95] Նույն տեղում, էջ 193։

[96] Նույն տեղում։

[97] Նույն տեղում, էջ 164։

[98] Ֆայեղ էլ Ղոսեյն. Հերոսական հայության անցյալեն, էջ 6; B. Eckart. Op. cit., S. 20; J. Künzler. Im Lande des Blutes, S. 46; Նույնի՝ Dreißig Jahre, S. 64; Deutschland und Armenien···, S. 177, 195; R. de Nogales. Op. cit., p. 153; Armenian Review. Spring 1984, vol. 37, № 1, p. 134. The Treatment of Armenians, p. 528, 532.

[99] Deutschland und Armenien···, S 177, 195; J. Künzler. Dreißig Jahre, S. 64.

[100] M. S. Ingeborg. Op. cit., p. 134.

[101] Deutschland und Armenien···, S. 233.

[102] H. W. Glockler. Op. cit., p. 49.

հայերին, որոնք որևէ բարեկամական կապ են ունեցել ինքնապաշտպանների հետ։ Քաղաքում մնացած հայերը բռնի կերպով մահմեդականացվեցին[103]։

Ուրֆայի ինքնապաշտպանական մարտերին անդրադարձել են այդ ժամանակի նշանավոր մարդիկ։ Ֆրիտյոֆ Նանսենը գրում էր. «Ուրֆայի հայերը զոհվեցին կատաղի պայքարից հետո»[104]։ Հայերը քաջությունը բարձր գնահատեց նաև Հանրի Բարբին. «...Ուրֆայում հայերը մի իսկական կռվի մեջ մտան թարդարարների դեմ և տեղի տվեցին միայն կառավարության կողմից ուղարկված զորքի բազմաքանակությանը»[105]։

Ուրֆայի հայերի քաջությունը ընդունեց նաև Թշնամին՝ Ֆահրի փաշան. «Ի՞նչ կլիներ մեր վիճակը, եթե այս ծանր օրերին մի քանի Ուրֆաներ մեր դեմ այդպես ծառանային»[106]։

Ուրֆայի այս ինքնապաշտպանությունը հերոսության մի փայլուն էջ ավելացրեց հայ ժողովրդի պատմության մեջ։

ИЗ ИСТОРИИ ГЕРОИЧЕСКОГО СОПРОТИВЛЕНИЯ г. УРФЫ В 1915 ГОДУ

Р. О. СААКЯН

Резюме

В начале 1915 г. на всей территории Османской Турции произошли массовые погромы и депортации армян. В некоторых местах армяне оказали упорное сопротивление турецким погромщикам. Мужественно оборонялись жители Вана, Шапин-Карахисара, Сасуна и других мест. Армянское население г. Урфы, забаррикадировавшись в армянском квартале города, с 29 сентября по 23 октября мужественно сопротивлялось турецким регулярным войскам. С помощью артиллерии туркам удалось сломить сопротивление армян. Весь армянский квартал был разрушен, разграблен и уничтожен. Из 35 тысяч армян в живых осталось 15 тысяч, которые были депортированы.

---

103 Deutschland und Armenien···, S. 199, 226, 233.

104 Геноцид..., с. 587.

105 Նույն տեղում, էջ 463։

106 ՀԱԳ, հ. 6, էջ 573։ Տե՛ս նաև Y. Ternon. Op. cit., p. 224.